

ԼԵԶՎԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԲՈՒՅԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ABSTRACT

THE PROCESS OF THE DEVELOPMENT OF LINGUOCULTURAL AND AREA STUDIES AWARENESS FOR THE TOURISM ENGLISH COURSE IN UNIVERSITIES

The aim of this article is to reveal a tourist-oriented English course to study proportionally linguocultural and regional components of communicative competence and training of future specialists in the sphere of tourism. Existing linguocultural and area studies of English must be constantly improved taking into account the socio-cultural realities of the English-speaking countries and Armenia. In this context, it stresses the importance of cross-cultural studies.

It is important to develop socio-cultural specialists, as we are dealing with intercultural communication, where the participants overcome phonetic, grammatical, lexical and cultural interference as well. On one hand, the specialists in the sphere of tourism must have the appropriate linguocultural knowledge to ensure the quality of service; on the other hand, they must present Armenia, its historical and cultural values, customs and traditions.

Key words: *linguocultural and area studies awareness, customs and traditions, intercultural communication, historical and cultural values, cultural dialogue, tour guides.*

РЕЗЮМЕ

Процесс развития лингвострановедческой осведомленности в
вузовском курсе английского языка в сфере туризма

Данная статья раскрывает проектирования туристически–ориентированного курса английского языка при пропорциональном изучении

лингвострановедческого и регионального компонентов коммуникативной и профессиональной компетенции будущих специалистов сферы туризма. Существующие лингвострановедческие и страноведческие курсы английского языка должны постоянно совершенствоваться с учетом социально-культурных реалий англоязычных стран и Армении. В этом контексте подчеркивается значение параллельного обучения лингвострановедению изучаемого языка и Армении.

При этом важно развить у будущих специалистов социально-культурную, дискурсивную и прагматическую компетентность, так как мы имеем дело с межкультурной коммуникацией, где участники коммуникации преодолевают не только фонетическую, грамматическую, лексическую, но и культурную интерференцию.

С одной стороны, специалисты сферы туризма должны иметь соответствующие лингвострановедческие знания для обеспечения качества сервиса, с другой стороны, они должны представить Армению, ее историко-культурные ценности, обычаи и традиции.

Ключевые слова: лингвокультурная и страноведческая осведомленность, межкультурная коммуникация, культурный диалог, историко-культурные ценности, обычаи и традиции, экскурсовод.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել զբոսաշրջային ոլորտի մասնագետների լեզվաերկրագիտական իրազեկության զարգացման գործընթացի արդյունավետությունը: Առաջնային է մշակույթների երկխոսության, մասնագիտական զբոսաշրջային ոլորտում, մշակութաբանական մոտեցման կիրառման, ճանաչողական, մասնագիտական պահանջմունքների ձևավորման, ուսումնական գործընթացի կադապարման հայեցակարգային հիմնադրույթները: Զբոսաշրջության ոլորտի մասնագետների համար կարևոր տեղ է զբաղեցնում միջմշակութային հաղորդակցությունը: Նրանք պետք է տիրապետեն լեզվաերկրագիտական գիտելիքներին՝ այցելուներին Հայաստանի պատմամշակութային արժեքները, սովորույթներն ու ավանդույթներն ըստ արժանվույն ներկայացնելու համար:

Բանալի բառեր՝ լեզվամշակութային եվ երկրագիտական իրազեկություն, սովորույթներ եվ ավանդույթներ, միջմշակութային հաղորդակցություն, պատմամշակութային արժեքներ, մշակութային երկխոսություն, զբոսավարներ:

Անգլերենի բուհական դասընթացում ապագա զբոսաշրջային ոլորտի մասնագետների լեզվաերկրագիտական իրազեկության զարգացման գործընթացն ավելի արդյունավետ կարող է դառնալ, եթե հաշվի առնվեն թե՛ ներուսումնական, թե՛ արտաուսումնական գործոնները, մասնավորապես ուսանողների մասնագիտական պահանջմունքները, քննադատական մտածողության զարգացման նախադրյալները: Լեզվաերկրագիտական իրազեկության զարգացման կարևորագույն պայման է հայրենագիտական և լեզվաերկրագիտական տեքստերի զուգահեռ ուսուցումը, տարբեր նախագծային աշխատանքների իրականացումը:

Լեզվաերկրագիտական իրազեկության զարգացումը դառնում է ավելի ինտենսիվ, եթե ստեղծվում է երկրագիտական և հայրենագիտական իրողությունների, տարբեր երևույթների ներդաշնակ ուսուցման մեթոդական համակարգ, որի հիմքում ընկած են անգլերենի ներառական ուսուցման սկզբունքները: Առաջնային է մշակույթների երկխոսության, մասնագիտական զբոսաշրջային ոլորտում մշակութաբանական մոտեցման կիրառման, ճանաչողական, մասնագիտական պահանջմունքների ձևավորման, ուսումնական գործընթացի կադապարման հայեցակարգային հիմնադրույթները:

Կենցաղային մտածողության մակարդակում անգամ ակնհայտ է, որ զբոսաշրջության և նրա սպասարկման գործը կազմակերպող, իրականացնող մասնագետները պիտի չթերագնահատեն լեզվական գիտելիքների դերը՝ հաշվի առնելով մասնագիտական գիտելիքների կարևորությունը և առաջնահերթությունը: Իրավական, տնտեսագիտական, գործարարական գիտելիքներից, կարողություններից և հմտություններից զատ, նրանք պետք է զարգացնեն իրենց հաղորդակցական իրազեկությունը, ընդ որում երկու, երբեմն էլ երկուսից ավել լեզուներով: Օտարերկրյա այցելուների, զբոսաշրջիկների հետ հաղորդակցվելիս, զբոսավարները, ուղեկցորդները պետք է հստակ պատկերացումներ ունենան այն երկրների ավանդույթների, սովորույթների, խորհրդանիշների, մշակութային արժեքների դիրքորոշումների մասին, որոնց նրանք ներկայացնում են:

Կարևորվում է այցելուների թե՛ տարիքը, թե՛ դիրքը, զբաղեցրած պաշտոնը, ազգային պատկանելությունը և այլն: Ընդ որում անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ զբոսաշրջիկ-այցելուների մի զգալի մասի համար անգլերենը երկրորդ կամ երրորդ լեզու է:

Ապագա զբոսաշրջային ոլորտի մասնագետները պիտի պատրաստ լինեն համագործակցել, միջմշակութային մասնագիտական փոխհարաբերությունների մեջ մտնել, որը ենթադրում է յուրացնել մասնագիտական տերմիններ և հասկացություններ և վարքագծային նորմեր, որոնք բնորոշ են թե՛ մայրենի, թե ուսումնասիրվող մշակույթներին:

Այսպիսով, զբոսաշրջիկների հետ շփվող մասնագետը պիտի կարողանա

հաղորդակցվել տարբեր մշակույթներ ներկայացնող անգլերեն խոսող մարդկանց հետ, հաշվի առնելով այն, որ նրանց լեզվական, հաղորդակցական և գործաբանական կողերը չեն համընկնում, այսինքն՝ մասնագետը գործ ունի լեզվակրի հետ: Դրա հետ մեկտեղ, զբոսաշրջության մասնագետը պիտի կարողանա ունենալ ոչ միայն լեզվական, այլև հոգեբանական պատրաստվածություն: Նա պիտի լինի նրբանկատ, հանդուժող, անգլերենի խոսքային վարվեցողության նորմերին քաջատեղյակ մասնագիտական կողմնորոշման ենթալեզվի համատեքստում: Նա չի կարող լինել նախաձեռնող, հաղորդունակ, եթե ժամանակին և ճիշտ չի բացահայտում զրուցակցի հոգեբանական, ազգամշակութային, հաղորդակցական առանձնահատկությունները: Կարևոր է հետևել մասնագիտական հաղորդակցական կողքսին, որը ներառում է՝ հյուրընկալության, համագործակցության, քաղաքավարության սկզբունքները և շփման համապատասխան ռազմավարությունը և մարտավարությունը:

Այսպիսով, զբոսաշրջության ոլորտում աշխատող անձնակազմը իր մասնագիտական գործունեությունը կարող է իրականացնել հետևյալ գիտելիքների առկայության դեպքում.

ա/ մասնագիտական շփման լեզվաբանական գիտելիքներ, հմտություններ, կարողություններ,

բ/ գործառնական գիտելիքներ, որոնք ներառում են մասնագիտական գործունեության կազմակերպման ժամանակ չափորոշիչների և ընթացակարգերի իմացություն, օտարերկրյա այցելուների պատմության, աշխարհագրության, մշակույթի և հայրենագիտական իրողությունների իմացություն:

Լեզվաբանական մակարդակում ապագա մասնագետները պիտի ձեռք բերեն իրական մասնագիտական հաղորդակցման գիտելիքներ, կարողություններ, հմտություններ (Նազարյան, 1993): Ուսուցանվող լեզվանյութը պիտի ներկայացնի հյուրանոցային և զբոսաշրջային բիզնեսը և պիտի նպաստի լեզվաբանական, խոսութային և հանրալեզվաբանական իրազեկության զարգացմանը:

Լեզվաերկրագիտական և մշակութաբանական մակարդակում ուսանողները պիտի ձեռք բերեն գիտելիքներ իրենց և ուսումնասիրվող լեզվաբանական հանրությունների մասին: Ուսանողները պիտի ի վիճակի լինեն լուծել տարբեր հաղորդակցական և մասնագիտական խնդիրներ, որն ապահովում է տվյալ մասնագետի հանրամշակութային և ռազմավարական իրազեկությունների ձևավորմանը:

ՀՀ-ում զբոսաշրջային բիզնեսը զարգացնելու, ակտիվացնելու ռազմավարություն մշակելիս, անհրաժեշտ է հաշվի առնել այդ ոլորտում կուտակված զարգացած երկրների՝ հատկապես Գեմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի փորձը: Գաղտիք չէ, որ զբոսաշրջային մենեջերները պիտի լինեն արհեստավարժ և պետք է ունենան համապատասխան մասնագիտական որակներ: Նախնական փուլում անհրաժեշտ է

նպատակադրվել ոչ թե մրցելու, մրցակցություն ապահովելու, այլ զարգացած երկրների համապատասխան ոլորտի աշխատողներին առաջադրվող պահանջները նվազագույն չափով բավարարելու: Անհրաժեշտ է հաշվի առնել միջազգային զբոսաշրջային ոլորտի մասնագետներին առաջադրվող չափորոշիչները և հարմարացնել դրանք մեր պայմաններին: Ըստ այդ չափորոշիչների՝ զբոսաշրջային գործակալություններում մշակվում են աշխատակիցների գործառույթները, հստակեցվում են նրանց պարտականությունների շրջանակը:

Առանձնահատուկ նշանակություն ունեն զբոսաշրջային ոլորտի մասնագետների համար նրանց անձնային և մասնագիտական որակները:

Անձնային որակներից կարելի է առանջնացնել՝

- վելուժական ունակությունները, մտածողության ճկունությունը,

- կազմակերպչական ունակությունները, այդ թվում՝ կառավարելու, ստեղծագործելու, արագ և ճիշտ որոշում կայացնելու ունակությունները

- քաղաքավարի, բարեհամբույր լինելը, մասնագիտական արտաքին:

Մասնագիտական որակներից առանձնացվում են հետևյալ որակները՝

- զբոսաշրջային ուղևորությունների, զբոսաշրջության, հյուրընկալության, աշխարհագրական և զբոսաշրջային շրջանների և կենտրոնների, մասնագիտական գործառույթների իրականացման տեխնոլոգիաների, զբոսաշրջային շուկայի առանձնահատկությունների, տեղական և ազգային տնտեսական հարաբերությունների իմացությունը,

- զբոսաշրջային գործարարության ոլորտում ժամանակակից հեռահաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու կարողությունը,

- տարբեր աշխատանքային իրավիճակներում գործընկերների հետ համագործակցելու ունակությունը,

- անգլերեն լեզվով բանավոր և գրավոր հաղորդակցվելու ունակությունը, բանակցելու, պայմանագրեր կնքելու, որոշումներ կայացնելու կարողությունները և հմտությունները:

Ընդհանուր առմամբ զբոսաշրջային ոլորտում գործունեություն ծավալող մասնագետը պիտի մասնագիտական մակարդակում ունենա շփման մշակույթ ո՛չ միայն մայրենի, այլև օտար լեզվով:

Զբոսաշրջային կողմնորոշման անգլերենի դասընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ է հստակորեն առաջացնել հաղորդակցական հիմնական գործառույթները՝ ճանաչողական, կարգավորող, արժեքային-կողմնորոշիչ, վարվեցողության և այլն: Նշված գործառույթները կոնկրետանում են զբոսաշրջային ոլորտի յուրահատկությամբ՝ գործարար, կառավարչական, մշակութային, էկոլոգիական, իրավական և այլն: Փաստորեն մենք գործ ունենք միջմշակութային հաղորդակցության հետ, որտեղ կարևորվում են ոչ միայն զուտ լեզվական, այլև

ֆոնային, հանրամշակութային գիտելիքները: Կարևոր է այն, որ այցելու-զբոսաշրջիկները և հյուրընկալ-զբոսավարները տարբեր գործառույթներ են իրականացնում: Ձբոսաշրջային գործն իրականացնողների համար օտարալեզու հաղորդակցումը մասնագիտական պարտականությունների կարևորագույն բաղկացուցիչն է: Նրանք հաղորդակցվում են տարբեր մակարդակներում՝ որպես թարգմանիչ-ռեֆերենտ, որպես համապատասխան փաստաթղթերի կազմող, գովազդային բնույթի նյութերի ստեղծող և այլն: Ընդ որում հաղորդակցությունը կարող է տեղի ունենալ անմիջականորեն՝ խորհրդատվության, գործարար հանդիպումների, բանակցությունների, սեմինարների ձևով և համացանցի միջոցով:

Ձբոսաշրջային կողմնորոշման անգլերենի ուսուցումը ենթադրում է հաղորդակցական իրազեկության ձևավորում մասնագիտական պարտականություններն իրականացնելու համար: Դրա համար անհրաժեշտ է, որ ուսանողները կարողանան՝

- * հաղորդակցվել գործընկերների հետ անմիջական շփման և հեռախոսով խոսելիս,

- * մասնակցել նույն ֆիրմայում աշխատող գործընկերների հետ գործարար խոսակցություններին,

- * հասկանալ գործարար նամակների, գովազդների, հայտարարությունների, կատալոգների բովանդակությունը,

- * կազմել հասարակ առևտրային նամակներ

- * լրացնել ակտեր, բլանկներ, ֆորմյուլյարներ:

Մի կողմից՝ զբոսաշրջային ոլորտի մասնագետը մասնակցում է տարբեր բնույթի բանակցությունների կամ միջոցառումների ինքնութույն, մյուս կողմից՝ կարող է տվյալ մասնագետը իրականացնել իր մասնագիտական պարտականությունները թարգմանչի օգնությամբ: Վերջինիս դեպքում հստակորեն պատկերվում են մասնագիտական կողմնորոշման կամ զբոսաշրջային կողմնորոշման անգլերենի ուսուցման խնդիրները: Եթե օտար լեզուն որպես մասնագիտություն ընտրած ուսանողը աշխատանք է տանում ընդհանուր առմամբ խոսքային գործունեություն ծավալելու ուղղությամբ, ապա զբոսաշրջային ոլորտի ապագա մասնագետը կունենա հետևյալ կարողություններն ու հմտությունները.

- Տիրապետել բանավոր և գրավոր շփման խոսքային վարվեցողության կանոններին, յուրացնել համապատասխան բառապաշարը, ներառյալ մասնագիտական տերմինոլոգիան, երկրագիտական և հայրենագիտական բառապաշարը, հաղորդակցվել խոսքային և ոչ խոսքային շփման մակարդակում արտասահմանցի գործընկերների հետ, յուրացնել քերականական և բառային թարգմանական դժվարությունները, ազատ հաղորդակցվել մասնագիտական ոլորտին վերաբերող ընտրված թեմաներով, ունկնդրել միջին տեմպով և հասկանալ

լեզվակրին, բավականին մեծ արագությամբ ընթերցել մասնագիտական գրականություն, կնքել պայմանագրեր, տանել գործարար նամակագրություն, աշխատել պաշտոնական փաստաթղթերի հետ, կազմել վիճակագրական աղյուսակներ, գծապատկերներ, գծանկարներ, թարգմանել տեքստեր անգլերենից հայերեն, վերարտադրել ունկնդրած հաղորդագրության իմաստը, պահպանելով լեզվական նորմերը, փոխարկել խոսքային տեղեկատվությունը ոչ խոսքայինի և հակառակը:

Ջրոսաշրջային անգլերենի ուսուցման վառ օրինակ է ուղեկցորդ-թարգմանիչի մասնագիտությունը: Այդ մասնագիտության սպեկտրը լայն է: Ուղեկցորդ-թարգմանիչները պիտի կարողանան բանավոր թարգմանություն ապահովել տարբեր բնույթի միջոցառումների ժամանակ: Նրանք պետք է կարողանան ինքնուրույն կազմակերպել էքսկուրսիաներ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով՝ համապատասխան տեսարժան վայրերում:

Կարևոր է այն, որ ուղեկցորդ-թարգմանիչները ինչ-որ առումով գիտամեթոդական աշխատանք են կատարում, կազմում են մեթոդական ձեռնարկներ, մշակում և թարմացնում են արդեն շրջանառվող զբոսաշրջային տեքստերը: Սակայն նրա ամենակարևոր գործառույթը իր երկրի պատմամշակութային, ազգային, կրթական, ճարտարապետական արժեքները հնարավորինս ճիշտ և մատչելի ձևով ներակայացնելն է: Ավելին՝ ուղեկցորդ-թարգմանիչի մասնագիտական վարպետությունը ապացուցվում է հայրենագիտական իրույթները և իրողությունները համարժեքորեն ներակայացնելու կարողությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ ուղեկցորդ-թարգմանիչները պիտի կարողանան ոչ միայն ճիշտ և արագ ընտրել համապատասխան զբոսաշրջային բովանդակության տեքստերը, այլև հաշվի առնել զբոսաշրջիկների, տարբեր այցելուների ազգային, անձնային առանձնահատկությունները, խոսքը, գովազդը, ծանուցումը ավելի գրավիչ, հետաքրքիր և մատչելի դարձնելու նպատակով:

Ինչպես արդեն նշվեց, օտար լեզվի ուսուցումը դժվար է պատկերացնել առանց մշակութային բաղադրամասի: Թե՛ դպրոցական, թե՛ բուհական կրթության արդի պահանջներից է բխում սովորողներին մայրենի և ուսումնասիրվող լեզուների մշակույթների հետ ծանոթացնելը: Որոշ մեթոդաբաններ համոզված են, որ երկրագիտական և լեզվաերկրագիտական բաղադրամասը անհրաժեշտ է ներմուծել ամեն դասի ժամանակ: «Դա նպաստում է երեխաներին «մշակույթների երկխոսության» համատեքստում սովորողների դաստիարակությանը, առաջացնում է նրանց մոտ ճանաչողական դրդապատճառներ, ձևավորում է նրանց օտար լեզվով շփվելու կարողությունը»: Հասկանալի է, որ ոչ մի դասընթաց չի կարող լինել արդյունավետ, եթե չեն կիրառվում նոր մեթոդներ, սկզբունքներ, նորագույն տեխնոլոգիաներ: Խոսքն այստեղ վերաբերում է ոչ թե մեթոդական, այլև

դիդակտիակական ուսուցողական ընթացակարգերին: Այս իրավիճակներում, անհրաժեշտ է հաշվի առնել ուսանողների լեզվական և լեզվաբանական գիտելիքների մակարդակը, իմացական, մասնագիտական պահանջմունքների բովանդակային բնութագրերը: Դրա հետ մեկտեղ կարևորվում է երկրագիտական հիմնական թեմաների շարունակական թարմացումը, դիտարկելով դրանք տարբեր տեսանկյուններից: Կարելի է զուգահեռներ տանել մեր ազգային ժողովի և Անգլիայի խորհրդարանի միջև: Սպորտ թեմային անդրադառնալիս, կարելի է պատմահամեմատական ակնարկի ձևով ներկայացնել այն մարզածները, որոնք ունենալով անգլիական ծագում, իրենց զարգացումն են ապրում Հայաստանում:

Ջրոսաշրջային անգլերենի դասընթացը հնարավորություն է տալիս ուսանողներին զարգացնել իրենց սոցիալ-մշակութային իրազեկությունը, այսպես կոչված ռեգիոնալ բաղադրամասը, եթե ստեղծվում են համապատասխան պայմաններ «Ռեգիոնալությունը անգլերեն լեզվով» դասընթացը անցկացնելու համար:

«Ուսուցման արդյունքում ուսանողը պիտի կարողանա՝

- բացատրել իր երկրի, ռեգիոնի և ուսումնասիրվող երկրի նմանությունները և տարբերությունները,
- պատմել իր մասին, իր շրջապատի, իր ռեգիոնի, իր պլանների մասին,
- նկարագրել իր ռեգիոնի կյանքի և մշակույթի առանձնահատկությունները,
- ծանոթացնել արտասահմանյան երկրների ներկայացուցչներին ռեգիոնի մշակույթի և նվաճումներին,
- ներկայացնել ռեգիոնալ սոցիալ -մշակութային իրույթները այլ երկրների ներկայացուցչներին,
- հանդես գալ որպես միջնորդ հայերենի /ռեգիոնալ/ և ուսումնասիրվող երկրի մշակույթների միջև :

Այսպիսով, կարելի է վստահորեն պնդել, որ անհրաժեշտ է նաև ռեգիոնալ բաղադրամասն ընդգրկել ոչ միայն բազային, ընտրողական, այլև մասնագիտական կողմնորոշման դասընթացի մեջ, հաշվի առնելով տվյալ դասընթացի նպատակն ու խնդիրները: Ռեգիոնալ դասընթացով զարգացնում են ուսանողների սոցիալ մշակութային իրազեկությունը, որը չի կարող ներառել միայն ուսումնասիրվող երկրի մասին սոցիալ-մշակութային գիտելիքները: Ռեգիոնալ բաղադրամասն իր մեջ ներառում է նախևառաջ ինքնուրույն, արտադասարանային աշխատանք: Այն լինելով նախագծային գործունեություն, իր մեջ ներառում է պլակատների, ռեֆերատների, կուրսային աշխատանքների պատրաստում: Հաշվի առնելով այն փաստը, որ զբոսաշրջային կողմնորոշման ուսուցման դասընթացի հիմնական նպատակը հաղորդակցական իրազեկության զարգացումն է, ռեգիոնալ բաղադրամասը ոչ թե անհրաժեշտ, այլ պարտադիր պայման է նշված նպատակին հասնելու համար: Այս տեսանկյունից կարևորվում է ոչ միայն դասախոսների, այլև ուսանողների դերը՝

իրենց ռեզիոնի (տարածաշրջանի) մասին ուսումնասիրվող լեզվով համապատասխան նյութեր հավաքելու և յուրացնելու առումով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Նազարյան Ա.Յ.** (1993), Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն- ռուսերեն- հայերեն ուսումնական բառարան, Եր. Ապոլոն
2. **Պետրոսյան Յ.Զ.** (1987), Հայերենագիտական բառարան /Է. Բ. Աղայանի ընդհանուր խմբ. -Եր.:Հայաստան :
3. **Вершловский С.Г.** (1987), *Общее образование взрослых: стимулы и мотивы.* -М.: Педагогика
4. **Весь мир: Энциклопедический справочник.** – (1996), Минск: Литература
5. **Китайгородская Г.А.** (1982), *Методика интенсивного обучения иностранным языкам.* - М.: Высшая школа
6. **Китайгородская Г.А.** (1986), *Методические основы интенсивного обучения иностранным языкам.* - М.
7. **Лернер И.Я.** (1971), *Дидактические основы формирования познавательной деятельности учащихся при изучении гуманитарных дисциплин.* Дис...докт. пед. наук. - М.,
8. **Лингвистический энциклопедический словарь / Под. ред. В.Н. Ярцева.** –(1990), М.: Сов. энциклопедия,
9. **Лопасова Ж.Я.** (1985), *Роль и место лингвострановедческого аспекта при обучении иностранного языка // ИЯШ.* –
10. **Лосев В.Ф.** (1968), *Введение в общую теорию языковых моделей.* - М.: Наука,
11. **Gasparyan G. R.** *British Studies (a course of lectures),* Yerevan, Macmillan Armenia, 223p.

Կուլիկյան Ռուզան – մ.գ.թ., ասիստենտ, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն ամբիոն, էլ. փոստ՝ rkulikyana@mail.ru:

Ներկայացվել է խմբագրություն՝ 12.11.20, տրվել է գրախոսության՝ 11.12.20 - 18.12.20, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 24.12.20: